ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու

և դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին

ԵԴ2/8445/02/24 ք. Երևան
22 Հոկտեմբերի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանս ծանոթանալով «ԱՌԳՈ-ՖԱՐՄ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

ՊԱՐԶԵՑ

«ԱՌԳՈ-ՖԱՐՄ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության՝ «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲ ընկերության և «Առգո Ֆարմ» ՍՊ ընկերության միջև 31.01.2024թվականին կնքված «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի մատակարարման» թիվ ՍԱԲԿ_ԳՀԱՊՁԲ-24/1-6 պայմանագիրը «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲ ընկերության կողմից միակողմանի լուծելու գործարքն անվավեր ճանաչելու և որպես անվավերության հետևանք՝ «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲ ընկերության 04.10.2024թվականի թիվ ԱԱ-558 որոշումը՝ «Առգո Ֆարմ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ անվավեր ճանաչելու, «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲ

ընկերության և «Առգո Ֆարմ» ՍՊ ընկերության միջև 31.01.2024թվականին կնքված «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի մատակարարման» թիվ ՍԱԲԿ_ԳՀԱՊՁԲ-24/1-6 պայմանագիրը՝ «Առգո Ֆարմ» ՍՊ ընկերության կողմից պայմանագրի կատարումից հրաժարված լինելու հիմքով լուծված ճանաչելու պահանջների մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն ՓԲ ընկերությունից պետք է պահանջել 31.01.2024թվականին կնքված «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի մատակարարման» թիվ ՍԱԲԿ_ԳՀԱՊՁԲ-24/1-6 պայմանագրի և «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲ ընկերության 04.10.2024թվականի թիվ ԱԱ-558 որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1.«ԱՌԳՈ-ՖԱՐՄ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության՝ «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲ ընկերության և «Առգո Ֆարմ» ՍՊ ընկերության միջև 31.01.2024թվականին կնքված «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի մատակարարման» թիվ ՍԱԲԿ_ԳՀԱՊՁԲ-24/1-6 պայմանագիրը «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲ ընկերության կողմից միակողմանի լուծելու գործարքն անվավեր ճանաչելու և որպես անվավերության հետևանք՝ «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲ ընկերության 04.10.2024թվականի թիվ ԱԱ-558 որոշումը՝ «Առգո Ֆարմ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ անվավեր ճանաչելու, «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲ ընկերության և «Առգո Ֆարմ» ՍՊ ընկերության միջև 31.01.2024թվականին կնքված «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի

կարիքների համար դեղորայքի մատակարարման» թիվ ՍԱԲԿ_ԳՀԱՊՁԲ-24/1-6 պայմանագիրը՝ «Առգո Ֆարմ» ՍՊ ընկերության կողմից պայմանագրի կատարումից հրաժարված լինելու հիմքով լուծված ճանաչելու պահանջների մասին, ընդունել վարույթ:
2.«Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն ՓԲ ընկերությունից պահանջել դատարան ներկայացնել 31.01.2024թվականին կնքված «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի մատակարարման» թիվ ՍԱԲԿ_ԳՀԱՊՁԲ-24/1-6 պայմանագրի և «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲ ընկերության 04.10.2024թվականի թիվ ԱԱ-558 որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
4. Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024թվականի դեկտեմբերի 03-ին:
5. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան

Digitally signed by AVETISYAN NAIRA 7501660379
Date: 2024.10.22 10:46:01 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am